

ԲԴՄՇ-ի հաճախակի տրվող հարցեր առողջության և անվտանգության վերաբերյալ (FAQ's)-

Մաս 2 8.11.21

- Որքա՞ն ժամանակ է հարկավոր չպատվաստված անձին մեկուսանալ, եթե շփվել է վարակված անձի հետ: Թարմացում 2021 թվականի օգոստոսի 11-ի դրությամբ. Վարակված անհատի հետ շփված աշակերտներն ու աշխատակիցները պետք է COVID -19-ի քննություն անցնեն և տեղեկացնեն արդյունքները դպրոցին/դպրոցական շրջանին: Շփման մեջ մտած լիովին պատվաստում չստացած աշակերտներն ու աշխատակիցները պետք է կարանտին (մեկուսացում) անցնեն և ապագա 10 օրվա ընթացքում վերահսկեն իրենց ախտանշանները: Կարանտինից (մեկուսացումից) կարելի է դուրս գալ 7-րդ օրը, եթե ոչ մի ախտանշան չունենան և եթե 5-րդ օրից հետո հանձնված պոլիմերազային շղթայական ռեակցիայի (PCR) քննության պատասխանը բացասական է եղել, բայց պետք է շարունակեն վերահսկել ախտանշանները մինչև կարանտինի (մեկուսացման) 14-րդ օրը:
- Ինչպե՞ս էք պարզելու, թե ու՞մ հետ են շփվել անհատները, եթե աշակերտը կամ ուսուցիչը քննության դրական պատասխան ստանան: Պարզելու համար, թե ում հետ են շփվել վարակված անձիք, համաճարակի առաջին իսկ օրից, մենք հետևել ենք Լոս Անջելեսի գավառի հանրային առողջապահական գրասենյակի հրահանգներին: Հետևում ենք բոլոր դրական դեպքերին, շփված անձանց տեղեկացում են հեռախոսագանգի կամ դպրոցի բուժքրոջ միջոցով, տեղեկացնում ենք նաև նամակի միջոցով, որ պետք է քննություն անցնել, տրամադրում ենք ռեսուրսներ և ախտանշանների վերահսկում և հետևում վարակի տարածման ուղուն: Կարող եք նաև դիտել մեր շրջանի գլխավոր բուժքույր Լենորա Ագիլերայի տեսաժապավենը՝ ԲԴՄՇ-ի կայքէջում: Ահա հղումը.

<http://publichealth.lacounty.gov/media/Coronavirus/docs/education/ScreeningEducationSettings.pdf>

Օրինակ՝ Աշակերտը հիվանդ է դպրոցում: Նրան ուղարկում են նշանակված վայր, որն առանձնանում է բուժքրոջ գրասենյակից և նրան քննում է առողջապահական վերապատրաստված աշխատակիցը: Եթե որոշվի, որ աշակերտը պետք է տուն գնա, ապա այդ մասին կտեղեկացնենք ծնողին: Խնդրում ենք նշել, որ որոշ աշակերտներ գրանցված ավերգիա ունեն, ուստի եթե աշակերտը քթարտադրություն ունի, ապա կաշխատենք ծնողի հետ պարզելու նրա նոր և տարբերակվող մյուս ախտանշանները: Բուժքույրը կառաջարկի ծնողին երեխային քննության տանել: Եթե քննության դրական պատասխան ստանա, ապա նա պետք է մեկուսանա, իսկ բուժքույրը կպատրաստվի տեղեկացնել նրա հետ շփված անձանց, որոնք նույնպես պետք է մեկուսանան: Մեկուսացման տևողությունը կախված կլինի այդ դեպքից: Վարակված երեխայի հետ շփված աշխատակիցներն ու աշակերտները կտեղեկացվեն նամակի միջոցով (առհասարակ տեղեկանալուց հետո 24 ժամվա ընթացքում): Դասարանի մեկուսացումը կախված կլինի շփված երեխաների թվից, պատվաստվածության կարգավիճակից և այլ գործոններից: Խնդրում ենք դիտել մեր շրջանի գլխավոր բուժքույր Լենորա Ագիլերայի տեսաժապավենը՝ ԲԴՄՇ-ի կայքէջում: Ահա հղումը.

<https://www.youtube.com/watch?v=H0KfaoXyTfc> և https://www.youtube.com/watch?v=t-UhCvrO_tY

- Քանի՞ հոգի պետք է վարակված լինի մեկ դասարանում այն փակելու համար: Իսկ ամբողջ դպրոցը փակելու համար: Ներկայումս, Լոս Անջելեսի գավառի հանրային առողջապահական գրասենյակը պահանջում է շփված բոլոր անձանց մեկուսանալ: Մենք հետևում են յուրաքանչյուր դեպքին և առաջարկում մեկուսանալ և քննություն անցնել: Երբեմն շփման մեջ են մտած լինում մի քանի հոգի, իսկ երբեմն էլ հարկավոր կլինի փակել բոլոր դասարանը: Լոս Անջելեսի գավառի հանրային առողջապահական գրադենյակը չի նշել, թե վարկվածների քանի դեպքում է հարկավոր փակել դասարանը կամ դպրոցը, բայց հարկ եղած դեպքում այդ որոշումը կկայացվի ԲԴՄՇ-ի և Լոս Անջելեսի գավառի հանրային առողջապահական գրասենյակի (LADPH) կողմից: Իրար հետ կապված 3 դեպքը համարվում է «բռնկում», բայց ոչ բոլոր բռնկումներն են պահանջում դասարանի կամ դպրոցի փակում:
- Հարկավոր է՞ մեկուսացման մեջ գտնվող աշակերտի քույրերին և եղբայրներին նույնպես մեկուսանալ: Ըստ հանրային առողջապահական գրասենյակի, սերտ շփման մեջ մտած անձիք պետք է մեկուսանան: Շատ դեպքերում, քույրերն ու եղբայրերը շփման մեջ մտած են լինում և ամենայն հավանականությամբ պետք է մեկուսանան (ենթարկվեն կարանտինի):
- Եթե աշակերտը/դասարանը, դրական դեպքի պատճառով կարանտինի մեջ է և տանը մեկուսացած, ինչպե՞ս են այդ աշակերտները դասավանդվելու: Ուսուցիչները հանձնարարություններ և տեղեկատվություն կհատկացնեն անհատական աշակերտների, ինչպես որ այն հատկացվում է այլ հիվանդությունների ընթացքում: Եթե ամբողջ դասարանը մեկուսանա տնային պայմաններում, ապա ուսուցիչը կդասավանդի հեռակա ուսուցման եղանակով: Եթե ուսուցիչը հիվանդանա, ապա դասը կդասավանդի փոխարինող ուսուցիչը: Ցածր դասարանների որոշ ուսուցիչներ կարող են աշխատանքային փաթեթներ տրամադրել, սակայն ուսուցիչները կհաղորդեն աշխատանք տրամադրելու իրենց ծրագրերն աշակերտներին այնպես ինչպես անում են տարվա սկզբին: ԲԴՄՇ-ի մեր թիմն աշխատում է ավելի մանրամասն տեղեկություն տրամադրել այս թեմայի շուրջ և հնարավորինս շուտ կտրամադրի այն:
- Արդյո՞ք հիվանդ և/կամ կարանտինացված (մեկուսացված) աշակերտները կանցնեն Անկախ ուսուցման ակադեմիայի (ILA) հեռակա դասընթացներ ստանալուն: Ներկայումս, հանրային առողջապահական գրասենյակը պահանջում է 8-10 օր մեկուսացում՝ կախված յուրաքանչյուր դեպքից, ուստի միջնակարգ դպրոցի աշակերտներին կարիք չկա անցնել անկախ ուսուցման, քանի որ դասընթացների քանակը տարբեր է: Անկախ ուսուցման ակադեմիայում, աշակերտները միաժամանակ ունենում են մեկ դաս: Մենք աշխատում ենք ծրագրի մշակել կարանտինի տակ գտնվող աշակերտների համար, որոնց մասին դուք շուտով կտեղեկանաք:
- Որո՞նք են այն օրենքները, որոնց պետք է հետևի այն աշակերտը, ով չի կարող դիմակ կրել կամ այն ճիշտ կերպ չի կրում դասասենյակում: Խնդրում ենք ծանոթանալ ԲԴՄՇ-ի աշակերտների դիմակ կրելու վերաբերյալ ունեցած մեր ուղեցույցների հետ: <https://www.burbankusd.org/Page/3080>
- Թույլատրվո՞ւմ է դպրոցական օրվա ընթացքում բաց պահել պատուհանները: MERV13 գոտիչները հիվանդանոցներում տեղադրված գոտիչների որակն ունեն: Օդափոխիչ մեր համակարգը դրսից մաքուր օդ է բերում սենյակներն օդափոխելու համար: Երբ ուսուցիչը

բացում է պատուհաններն ու դռները, այն խաթարում է օդափոխիչ համակարգի աշխատանքի որակը: Շինությունների մեր բաժինն առաջարկում է փակ պահել բոլոր դռներն ու պատուհանները՝ օդափոխության համակարգի աշխատանքը հեշտացնելու համար:

- Ինչպե՞ս եք ֆիզիկական հեռավորություն կիրառելու ճաշի ընթացքում:
Աշխատակազմը կքաջալերի աշակերտներին հնարավորին չափ հեռավորություն պահպանել: Օնոդները կարող են քաջալերել երեխաներին դիմակ կրել նույնիսկ դրում, եթե դա ավելի հարմար է իրենց համար:

- Ինչպե՞ս է ընթանալու ճաշը եղանակի անբարենպաստ օրերին:
Յուրաքանչյուր դպրոցի ղեկավարությունն այլընտրանքային դասացուցակ կմշակի, այնպես ինչպես կատարվում է անձրևային և շատ շոգ օրերի ընթացքում: Տարրական դպրոցում, աշակերտները կճաշեն դասասենյակում, իսկ միջնակարգ դպրոցներում ավելի մեծ սենյակում, օրինակ՝ ֆիզկուլտուրայի դահլիճում կամ բազմաֆունկցիոնալ սենյակներում:

- Ինչպե՞ս է պահպանվելու ֆիզիկական հեռավորությունը դասամիջոցի կամ ճաշի ընթացքում, երբ աշակերտները հանելու են դիմակները:
Աշխատակազմը կհիշեցնի աշակերտներին հեռավորություն պահպանել:

- Ո՞ր դեպքում է աշակերտին թույլ տրվում դասասենյակում հանել դիմակը:
Դասասենյակում, աշակերտները պետք է դիմակ կրեն: Այն կարելի է հանել դրսում:

- Կշարունակվե՞ն օգտագործվել ընդհանուր տարածքները, որոնցից են համակարգչային սենյակները, գրադարանները և դահլիճը:
Այո, բայց պահանջվելու է համընդհանուր դիմակավորում:

- Պահանջվում է՞ ամեն առավոտ չափել երեխայի ջերմությունը դպրոց մտնելուց առաջ:
Օնոդները պետք է առողջական ստուգում (չափեն ջերմությունը և Կորոնավիրուսի աշխատանշանները) կատարեն երեխաներին դպրոց ուղարկելուց առաջ: Ամեն շաբաթ, մենք հրահանգներ և հիշեցումներ կուղարկենք ծնողների և աշխատակազմի համար: Այս պահին, աշխատակազմը չի չափի երեխայի ջերմությունը: COVID-ի ախտանշանների պաստառները կտեղադրվեն դպրոցի մուտքի մոտ և կհիշեցնեն ծնողներին երեխաների առողջության ստուգումներ կատարելու կարևորության մասին:

- Արդյո՞ք թույլ կտաք ոչ բնութագրող ախտանշաններ, օրինակ՝ քթարտադրություն կամ հագ, ունեցող աշակերտին մնալ դպրոցում:
Այն կախված է անհատական դեպքերից: Դպրոցի բուժքույրը կգնահատի աշակերտի վիճակը և կորոշի, թե ինչ անել: Որոշ աշակերտներ փաստագրված հիվանդություններ ունեն, որոնց մասին բուժքույրերն արդեն տեղեկացված են: Մենք չենք ցանկանում տուն ուղարկել լավերգիայով տառապող աշակերտներին: Բուժքույրը կաշխատի ծնողի հետ նոր կամ ոչ տիպիկ ախտանշանները գնահատելու համար: Նրանք վերապատրաստված են և համագործակցում են Լոս Անջելեսի գավառի հանրային առողջապահական գրասենյակի հետ:

Ինչ է լինելու, եթե այդպիսի ախտանշաններ ի հայտ գան դպրոցական օրվա ընթացքում:
Օրինակ՝ պետք է՝ հազացող աշակերտը հեռանա դասարանից: Կամ Կորոնավիրուսի քննություն անցնի՝ դասարան վերադառնալուց առաջ:

Եթե աշակերտն ախտանշաններ ունենա օրվա ընթացքում, ապա բուժքույրը կմեկուսացի նրան նշանակված տարածքում և կքննի նրան: Եթե նա որոշի, որ աշակերտը պետք է տուն գնա, ապա կտեղեկացնի ծնողին: Ծնողները պետք է թարմացնեն ծնողական պորտալ կայքի հեռախոսի համարները: Կհետևենք շփման, կարանտինի, քննության և ծանուցման հրահանգներին: Խնդրում ենք ծանոթանալ շփման կառավարման ծրագրի հետ: Ահա հղումը.
http://publichealth.lacounty.gov/media/coronavirus/docs/protocols/ExposureManagementPlan_K12Schools.pdf

*Խնդրում ենք նշել, որ յուրաքանչյուր դեպք տարբեր է, բայց Covid-19-ի յուրաքանչյուր դրական արդյունքի դեպքում, մենք կգնահատենք այդ դեպքը, կտեղեկացնենք նրա հետ շփված անձանց, կզեկուցենք հանրային առողջապահական գրասենյակին, ծնողներին/աշակերտներին կամ աշխատակազմին, թե երբ է շփումը տեղի ունեցել, երբ մեկուսանալ և կխրախուսենք քննություն անցնել:

- Կբարձրանա՞ արդյոք թույլատրելի բացակայությունների թիվն այս տարի, որպեսզի կարողանանք հիվանդ կամ ենթադրաբար վարակված երեխաներին պահել տանը:
Covid-19-ի հետ կապված բացակայություններին վերաբերվելու ենք այնպես, ինչպես մյուս հիվանդությունները: Այնուամենայնիվ, մենք հասկանում ենք, որ սա աննախադեպ տարի է և շատ կարևոր է, որ հիվանդ աշակերտներն ու աշխատակիցները մնան տանը:
Բացակայությունների մասին կարող եք խոսել դպրոցի ղեկավարության կամ Ուսանողական ծառայությունների հետ:
- Իմ երեխան խոսքի թերապիայի խմբակային դասեր է ստանում: Ակնհայտ է, որ այս դասի ընթացքում դիմակ կրելն անհնար է: Ի՞նչ փոփոխություններ են կատարվելու խոսքի (լոգոպեդի) ծառայություններն ապահով և արդյունավետ պահելու համար:
Աշխատակազմը և աշակերտները կարող են օգտվել թափանցիկ դիմակներից կամ երեսի վահանից և կտորե «վարագույրներից»:
- Եթե դուք ընտրեք Անկախ ուսուցման ակադեմիայի (ILA) տարբերակը, կարող եք փոխել ձեր որոշումը և երեխային անձամբ դպրոց ուղարկել ուսումնական տարվա ընթացքում: Ինչքա՞ն ժամանակ կպահանջվի այդ փոփոխությունն իրականացնելու համար:
Այո, աշակերտը կարող է Անկախ ուսուցման ակադեմիայի դասերից անցնել անձամբ ուսուցման 5 օրվա ընթացքում՝ համագումարի 130-րդ օրինագծի համաձայն: Այնուամենայնիվ, ծրագրի փոփոխությունները կազդեն երեխայի կրեդիտների վրա և խաթարել նրանց ուսուցմանը:
- Ի՞նչ տեսք է ունենալու տարրական դպրոցի Անկախ ուսուցման ակադեմիայի օրը: Զումը պարտադիր է լինելու, թե՞ ընտրովի:
Անկախ ուսուցման ակադեմիան (ILA) 7-12-րդ դասարանցիների համար է: Անկախ (ինքնուրույն) ուսուցումը տարրական դպրոցի Ամ-3-րդ դասարանների աշակերտների համար է և բաղկացած է օրական 1 ժամ առցանց (synchronous) ուսուցումից և շաբաթական շփումից: 4-րդ և 5-րդ դասարանների աշակերտները շաբաթը մեկ անգամ 1 ժամ առցանց (synchronous) դասեր կունենան և առօրյա շփում:

- Թույլատրվում է՝ կամավոր աշխատող ծնողներին, ինչպես նաև պատվաստանյութ չստացած կամ մասնակի պատվաստանյութ ստացած անհատներին մտնել դպրոց կամ կամավոր աշխատել:

Միայն պատվաստանյութ ստացած կամավորները կարող են մտնել դպրոց: Նրանք պետք է պատվաստանյութ ստանալու ապացույց ներկայացնեն դպրոցին:
- Ի՞նչ պետք է անեմ, եթե դպրոցի կողմից դրական դեպքերի կառավարումը մտահոգություն առաջացնի ինձ մոտ:

Համաճարակի ընթացքում, ԲԴՄՇ-ի առողջապահական ծառայությունները շփման, դեպքերի դեկլարման և զեկուցման գործընթացի մեջ են եղել: Մենք զբաղվել ենք աշխատակազմի հետ, երեխաների խնամքի և ամառային դպրոցի ընթացքում կատարված դեպքերի հետ և մեծ փորձ ունենք այս ոլորտում:
- Հարկավոր է՞, որ ծնողը պատվատման ապացույց ներկայացնի:

Եթե ձեր երեխան պատվաստանյութ է ստացել, խնդրում ենք էլեկտրոնային փոստով դպրոցի բուժքրոջն ուղարել ապացույցի պատճեն: Այն կպահվի գաղտնի և կօգտագործվի միայն վարկված անձանց շփման գործընթացի դեկլարման ընթացքում:
- Անձամբ ուսուցումը սկսելուց առաջ, պետք է՞, որ երեխան ստանա իր բոլոր պատվաստումները:

Այո, անցյալ տարվանից սկսած, մեր բուժքույրները զանգահարում և նամակներ են ուղարկում համոզվելու համար, որ բոլոր երեխաները ստացել են պատվաստումները: